

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

### ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2018 թվականի հոկտեմբերի 3-ին կայացած նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 26-ը (ցուցակը կցվում է)

Նախքան խորհրդի նիստի բացումը Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

#### Օրակարգ

1. 2018/2019 ուստարվա ընդունելության արդյունքները  
/զեկ. փոխդեկան Ա.Թ.Գրիգորյան/
2. 2018/2019 ուստարվա գիտական խորհրդի աշխատանքային պլանի հաստատում  
/զեկ. գիտ.քարտուղար Ե.Ս.Մանուկյան/
3. 2017/2018 ուստարվա քննությունների լուծարքային շրջանի արդյունքները  
/զեկ. փոխդեկան Վ.Պ.Վարդանյան/
4. «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները» թեմայով միջազգային կոնֆերանսի արդյունքների քննարկում  
/զեկ. դեկան Մ.Ա.Գրիգորյան/
5. Ընթացիկ հարցեր

1. **ՀՄԵՅԻՆ** Փոխդեկան Ա.Գրիգորյանի հաղորդումը 2018/2019 ուստարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ: Ա.Թ.Գրիգորյանը մանրամասնորեն՝ թվերով, ներկայացրեց ընդունելության արդյունքներն ըստ մասնագիտությունների: Նա անվանական ներկայացրեց այդ պահի դրությամբ չվճարած և չիրամանագրված ուսանողներին:

**ՀԱՐՅԵՐ ՏՎԵՅԻՆ**. պրոֆ Թ.Վարդանյանը փորձեց ճշտել մարզերից, շրջաններից և քաղաքից ընդունված ուսանողների տոկոսային հարաբերությունը, ինչպես նաև «Սերվիս»

մասնագիտություն ընդունվելու համար «Աշխարհագրություն» առարկան որպես միասնական քննություն ընտրած ուսանողների քանակը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Մ.Ա.Գրիգորյանը, ով դրական գնահատեց, շրջանավարտների սակավաթիվ պայմաններում, ընդունված ուսանողների բավականին հուսադրող թիվը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն

**2. ԼՍԵՑԻՆ.** Ֆակուլտետի գիտքարտուղար Ե.Մանուկյանի հաղորդումը 2018/2019 ուստարվա գիտական խորհրդի աշխատանքային պլանի նախագծի վերաբերյալ: Նա նշեց, որ նախագծում ներառված են այն բոլոր քննարկվելիք պարտադիր հարցերը, որոնք նախատեսված են ընթացիկ ուստարում, ինչպես նաև ամբիոնի վարիչների և դեկանի կատարած աշխատանքների հաշվետվությունները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Հ.Մովսիսյանն առաջարկեց աշխատանքային պլանը նախապես՝ 1 շաբաթ ժամկետով, էլեկտրոնային տարբերակով ներկայացնել խորհրդի անդամներին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն, հաստատել???

**3. ԼՍԵՑԻՆ.** Փոխդեկան Վահրամ Վարդանյանի հաղորդումը 2017/2018 ուստարվա քննությունների լուծարքային շրջանի արդյունքների վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց լուծարքային շրջանի արդյունքում հաշվետու ժամանակահատվածում լուծարքային առարկա ունեցող ուսանողների քանակը: Իր խոսքում Վ.Վարդանյանը նշեց նաև հեռացվող ուսանողների քանակը՝ թե՛ ուսման վարձը չվճարելու և թե՛ անբավարար առաջադիմության պատճառով:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն

**4. ԼՍԵՑԻՆ.** դեկան Մ.Գրիգորյանի հաղորդումը «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները» թեմայով միջազգային կոնֆերանսի արդյունքների վերաբերյալ: - Բավականին համարձակ քայլ էր նման միջոցառում նախաձեռնելը, որը հաջողությամբ եզրափակեցինք,- ասաց Մ.Գրիգորյանը: Նա նշեց արտերկրի մասնակիցների քանակը, որոնց մի մասի կեցության ծախսերը ֆակուլտետը վերցրել էր իր վրա: Մ.Գրիգորյանը բարձր գնահատեց կազմակերպիչների ինչպես նաև հովանավորի կատարած աշխատանքը: Նշեց էքսկուրսիաների անցկացման դրական

լինելը՝ Հայաստանի մշակույթը լավագույնս ներկայացնելու արտերկրում: Շեշտեց ֆոտոստենդի պատրաստման անհրաժեշտությունը, որպեսզի ֆակուլտետ կատարած աշխատանքը արտահայտվի թե կայքում և թե ֆակուլտետի ցուցատախտակներում: Մ.Գրիգորյանը սեկցիայի ղեկավարներին 2 շաբաթյա ժամկետում առաջարկեց վերանայել և դասակարգել հոդվածներն ըստ գիտական մտքի և ներկայացված որակի: Առաջարկեց կոնֆերանսի ընթացքում ձեռք բերված ծանոթություններն օգտագործել ի օգուտ ֆակուլտետի և հնարավորինս պայմանագրեր կնքել ուսումնական և գիտական ուղղություններով:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Թ.Վարդանյանը դրական գնահատեց նախաձեռնությունը և անդրադարձավ ներկայացված զեկույցներին: Նշեց լրատվության ներկայության սակավաթիվ լինելը և առաջարկեց համալսարանի homepage ի վրա լայնամասշտաբ լուսաբանում տեղադրել: Բարձր գնահատեց սեկցիաների ղեկավարների կատարած աշխատանքը: Շնորհակալություն հայտնեց ուսանողներին իրենց պատրաստակամության և աջակցության համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն:

## 5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

**ՀՄԵՑԻՆ.** Երևանի պետական համալսարանի երկրաֆիզիկայի ամբիոնի երրորդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Սամվել Մանուկի Դեմիրճյանի գիտական ղեկավարի փոփոխության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ Գ.Վ.Մարկոսյանը և նշեց, որ Սամվել Մանուկի Դեմիրճյանի գիտական ղեկավար ԵՀԳ դոկտոր Լեոն Հախվերդյանը դիմել է ամբիոն վատառողջ լինելու պատճառով իրեն գիտական ղեկավարի պաշտոնից ազատելու հարցով:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Երևանի պետական համալսարանի Երկրաֆիզիկայի ամբիոնի երրորդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Սամվել Մանուկի Դեմիրճյանի գիտական ղեկավար նշանակել ԵՀԳ դոկտոր, պրոֆեսոր Ռ.Ս.Մինասյանին:

**Խորհրդի նախագահ**

**Ս.Ա.Գրիգորյան**

**Խորհրդի քարտուղար**

**Ե.Ս.Մանուկյան**